— Ֆարհատ, քանի օր առաջ տեսայ, մի գիւղացու կապած, ծեծում էին նրա համար, որ չէր գնացել խանի համար ձրի բանելու: Խեղճը իր ընտանիքի միակ աշխատող մարդն է, եթէ նա միշտ խանի համար ձրի բանէ, էլ ո՞վ կը կերակրէ նրա երեխաները: Ֆարհատ, հէնց որ տեսայ, սիրտս այրուեց, էլ չկարողացայ արտասուքս պահել...

Ահա այսպէս, միշտ գիւղացիներ, միշտ գիւղացիների մասին էր խօսում նա: Ես մտածում էի, թէ խեղճ տղան ցնորուել է. նրան ի՞նչ փոյթ, որ գիւղացիները ուտելու հաց չունեն կամ նրանց տանջում են: Լաւ չէ՞, ասում էի, որ իր փորի համար մտածէ. ինքը աւելի բախտաւոր չէ այն թշուառներից, որոնք գիշերները սոված են պառկում:

Ի հարկէ, այդ մեծ փոփոխութիւն էր Կարօյի բնաւորութեան մէջ: Նա առաջ սովորութիւն ունէր խօսել Քորօղլիի, Ռուստամի, Զալի եւ դրանց նման հերոսների մասին, որոնց պատմութիւնը լսել էր աշուղների վէպերի մէջ, — կամ խօսում էր գեղեցիկ աղջիկների վրայ եւ ծաղրում էր նրանց այս եւ այն թուլութիւնները: Յանկարծ բոլորը մոռացաւ նա, սկսեց գիւղացիների մասին խօսել, նրանց վրայ մտածել: Ո՞վ մտցրեց նրա մէջ այդ ցնորքը: — Ես չգիտէի, միայն Ասլանը վերաբերում էր որսորդ Աւօյին:

ԺԱ. ՂԱՐԱ-ՄԵԼԻՔՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Մի անգամ Կարօն ինձ ասաց. — Ֆարհատ, տատս շատ հիւանդ է, ես մենակ եմ, գնանք մեր տուն, այս գիշեր մեզ մօտ կացի՛ր:

Ես գնացի: Կարոյենց բնակարանը շատ հեռու չէր մեր տնից: Ես գտայ Զումրուդին, արդարեւ, ծանր հիւանդութեան մէջ. խեղճ կնոջ միայն մորթն ու ոսկորն էր մնացել. շունչը հազիւ ելումուտ էր անում: Երբ մեզ տեսաւ նա, փոքր-ինչ հոգի առաւ, խնդրեց գլուխը վեր բարձրացնել եւ բարձերը նեցուկ տալ մէջքին, որ կարողանայ նստել: Կարօն կատարեց նրա ցանկութիւնը: Հնոցի մէջ վառւում էին մի քանի կտոր փայտեր, եւ կարմիր լոյսը ծաւալելով փոքրիկ խրճիթի մէջ, լուսաւորում էր հիւանդի մաշուած, դալկացած դէմքը:

Հիւանդը կանչեց Կարօյին, նստեցրեց իր մօտ, եւ նրա ձեռքը առնելով իր ոսկրացած ափի մէջ, ասաց թոյլ եւ դողդոջուն ձայնով.

— Ես մեռնում եմ, Կարօ, քանի որ բերանս փակուած չէ, թող լեզուս բաց անէ քեզ այն գաղտնիքը, որ այսքան տարի ծածուկ էր պահուած:

Նա պատմեց, թէ ինքը Կարօյի ոչ տատն է, ոչ նրա ազգականը, այլ սկզբում Կարօյի հօր տան աղախինն է եղել, իսկ յետոյ դարձաւ նրա դայակը: